

ւիթ Անհողին փեսայացաւ կախեթի կիւրիկէ գ. ի հետ՝ առնելով անոր ջորակրցել դուստրը: Սոյն այս կախեթի թագաւորս չունենալով ուրիշ զաւակ իր կենդանութեան որդեգրած էր իւր դստեր եւ դաւիթ Անհողինին որդին՝ զգագիկ որ պապին մեռնելէն վերջ անոր յաջորդեց: Գագիկով կիւրիկեան բագրատունի ցեղը նոր ձիւղաւորում մը կ'ունենայ եւ անկախ թագաւորական իշխանութիւն մը կը ժառանգէ, եւ քանի մը սերունդ յաջորդաբար կ'իշխէ կախեթի վրայ: Մեր պատմութեան կարգը չընդհատելու համար այս նոր ձիւղաւորութեան մէն մի իշխանին վրայ առանձին գլխով մը պիտի խօսինք վերջէն:

(Հայութականիւն:)

Հ. ԳԵՂՄՈԴ. ՄՈՂԱԿԱՆԱՆ



ԶԱՀԵՐՄԱՀԵԼԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻԽՈՒԹԻՒՆՆԵՐ

— (Հայութականիւն:)

9. Քաղի երգեր:

Քաղի երգերից մեր ձեռքը հասել է միայն մի փարբիկ կտոր, որը կարելի է ասել գեղջկական յաջող նուագներից մէկն է: Ամառ է. գաշտեցի հնձւորն արտն է իջել եւ աշխոյժ եռանդով, մանգաղի զնդոցի հետ, հասուն խուրձերը գլորում է գետին, իսկ քրաջան նանը առաւօտ վաղ թոնիր է վառել, լաւաշ թխել, կարագ շինել, սեղան պատրաստել եւ յորնած բալին տուն է կանչում:

Քամուն գալիս հօվ ու հալին,
Նանը զուբրան էրնած կալին.

Զեռիդ մանգաղ՝ կապուտ բիստի,
Ղօվդէն ձեռդ եկ հանդստի:

Ափսոս սակայն, որ այս բովանդակութեամբ հիւսուած ուրիշ երգեր չկան: Կոյնպէս Զահարմահալցիներին անծանօթ են վարուցանքի ժամանակ մաճկալների երգած հօրօվելները, որոնցով այնքան հարուստ են վանայ, Ակնայ, Արճեշի, Խնուսի, Բորջալուի եւ այլ գաւառները: Այդ հանգամանքը, ի հարկէ, պիտի վերագրել գիւղացիների տնտեսական ծանր եւ անմիթար դրութեան: Հին, աւատական կար-

գերի տակ հեծող ու հարստահարուղ ժողովուրդը՝ սիրտ չունի երգելու...

10. Մանկական խաղեր ու երգեր:

Հայ ժողովրդական գրականութիւնը մանկական խաղերի ու երգերի տեսակետից այնքան էլ հարուստ չէ. այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ գաւառներում եւ գիւղերում դոյութիւն ունեցող ժողովրդական մանկական խաղերից ու երգերից շատերը՝ մինչեւ այսօր էլ գիւղն չեն հաւաքուած, որով մեր գրականութիւնն այդ ուղղութեամբ խիստ տիտուր մի պատկեր է ներկայացնում, եթէ միայն ի նկատի չառնենք այն հատ ու կտորները, որոնք լցու տեսան մի քանի ազգագրական հանդեսների մէջ:

Մանկական մի քանի խաղեր եւ երգեր գոյութիւն ունեն նաև Չահարմահալում, որոնցից առանձին ուշադրութեան արժանի են հետեւեալները. 1. Հատիկ-հատիկ, 2. Նուրին, 3. Թունդիր-թունդիր եւ 4. Տէր-օվանէս: Տեսնենք ամեն մէկն առանձին:

1. Հատիկ-հատիկ: 4—8 երեխաներ գետնի վրայ նստած՝ շըջան են կազմում եւ իրենց ձեռքերը դնում մի տեղ, երար կշոր ապա երեխաներից մէկն իր ձեռքի ցուցամատը կարգով դպջում է նրանց ձեռքերին եւ արտասանում.

Հատիկ, հատիկ,
Ուտուլ մատիկ.
Չար ինձօրիկ,
Չար փշատիկ.
Կա մէր անի,
Կա կուտ ուտի.
Աւագն ասի.
Պաչիկ անի.
Դուռը բանա,
Դուս անի:

Ոտանաւորն ում ձեռքի վրայ որ վերջանում է, նա յետ է քաշում իր ձեռքը եւ այսպէս շարունակում է մինչեւ ամենավերջին ձեռքը: Վերջում ում ձեռքը, որ մնում է, նա մէջքի վրայ կուտում է, իսկ միւս երեխաները իրենց ձեռքերը միմեանց վրայ դնելով՝ դարսում են նրա մէջքին: Եթէ նիթակայ երեխան իր մէջքի վրայ դարսուած ձեռքերից ամենավերջին ձեռքի ում պատկանելը ճիշդ է ասում, ազատում է, եթէ ոչ՝ պատժում է:

2. Նուրին: Նուրին ջրապաշտական շըջանի նշանալներիցն է: Երաշտ ժամանակ երեխաները

մի աւելի երկար շոր են հագցնում եւ խրտուի-
լակ շինում, ապա շրջելով տները երգում.

Նուրին-նուրին էկէլ է,
Շալէ շաբիք հաքէլ է.
Քօլքէ դօղիք կապէլ է.
Մեր մուրինի փայլը տուէր,
Ուտենք, խմենք, քէֆ անենք.
Անձրէլ, անձրէլ ցած արի,
Բուսցրու ցօրէն ու գարի:

Տնեցիները ամանով ջուր են ածում նու-
րինի դլախն եւ երեխաներին էլ մի բուռ ցորեն,
ալիւր կամ ձու եւ իւղ են տալիս:

3. Թունդիր-թունդիր: Երկու երե-
խաներ կանգնում են դէմ դիմաց. նրանցից
մէկը, որ կոչւում է թունդրատէր, երկու ձեռ-
քերը բանալով՝ մատների հայրերն իրար է
կպցնում, իբր թէ սանդուխ է կազմում, իսկ
միւս երեխան իր ցուցամատը դնում է սանդուխի
առաջին աստիճանի՝ երկու ձկոյթների վրայ եւ
ասում.

— Թունդիր, թունդիր, կրակ տուր:
Թունդրատէրը պատասխանում է.

— Վերեւի թառը:

Խօսակիցն իր ցուցամատը բարձրացնում է
սանդուխի երկրորդ աստիճանը, այսինքն միա-
ցեալ մատնեմատների վրայ, ուր նշն է կրկնում
եւ այսպէս մինչեւ ցուցամատների գլուխը, ուր
թունդրատէրն ասում է.

— Կրակը թունդիրն է, կուս կէցի՝ հանէ:

Այնուհետեւ խօսակցութիւնը երկուսի
մէջ աեղի է ունենում հետեւեալ կարգով.

— Գէլ չկայ:
— Օնչինչ չկայ:
— Աղլէն չկայ:
— Օնչինչ չկայ:
— Զաղալ չկայ:
— Օնչինչ չկայ:
— Շիր ու փալանդ չկայ¹:
— Օնչինչ չկայ:

Խօսակիցն սկսում է հաց թիւել,
Թունդրատէրն ասում է.

— Եախնի դիր:
Խօսակիցն եխնի է դնում թուդիրը եւ
ասում:

— Վայ, մաշիկս նի ընդուաւ:

¹ Տալիս է վայրենի կենդանիների անունները, ինչ-
ու որ յիշում է:

Թունդրատէրը պատասխանում է.

— Կուս կէցի, հանէ:

Խսակիցն փոսի մէջ է իշեցնում ձեռքը,
որ մաշիկս դուս բերէ, թունդրատէրը յանկարծ
հաջեռու ձայներ է հանում՝ “հաֆ, հաֆ,
հաֆ”, որպէս զի խօսակիցն վախենայ:

Հատ անգամ էլ աղջիկ ու տղայ միասին
են խալում:

4. Տէր-Օվանէս: Հետաքրքրական է
նաև Տէր-Օվանէսը. մի խումբ մանուկներ ձեռք
ձեռքի բունած՝ կազմում են կիսաշրջան, որի
երկու ծայրերին կանգնողները նշանակում են
մեծաւորներ՝ “մէրերու: Ապա երկու “մէրերին
մէջ տեղի է ունենում հետեւեալ խօսակ-
ցութիւնը.

— Տէր-Օվանէս:

— Պատրուքուկէս¹:

— Զունօվ էրթամ թէ դափով:

— Դափով:

Դրա վրայ մէրերից մէկը եւ նրա մօտի
ընկերները ձեռքերնին բարձրացնում են, իսկ
միւս մէրը “դափ, դափ, դափ, ասելով՝ իր
ընկերների հետ գնում, անցնում է նրանց ձեռ-
քերի տակից, որի ընթացքում մէրի մօտ կանգ-
քերի ձեռքերը խաչաձեւում են: Այնու-
հետեւ երկու մէրերը միմեանց հետ խօսում են
այսպէս:

— Յաձկդ լուս, օր տղա իս բերի:

— Յաձկի լուսօվ ապրես, բարօվ կապես
կարմիրը:

Ապա նորից է շարունակում խաղը, մինչեւ
որ բոլոր մանուկները մէջք մէջքի խաչաձեւ
կապուած մի շարք են կազմում, որով երկու
մէրերը դէմդիմաց են դալիս: Դրանից յետոյ
երկու մէրերի մէջ տեղի է ունենում հետեւեալ
խօսակցութիւնը.

— Արի էրթանք դափի:
— Զվան չունեմ:
— Զվանդ կուտամ:
— Հաց չունեմ:
— Հացդ կուտամ:
— Ղաթըլն չունեմ:
— Ղաթըլն կուտամ:

1 Գիւղի ծերուների ասելով՝ “Նոր-Զուզպի Ա-
Սմենափրկէտան վանքի մօտ ապրել է Զահարմահալցի մի
քահանայ Տէր-Օվանէս անունով, որն իր շրջապատի մէջ
ունեցել է մեծ ազդեցութիւն, որով ժողովուրդը նրան
կուլ է պատրուքուկէս, այսինքն պատրիարքի կէս ազդե-
ցութիւն ունեցող:

- Զուր չունեմ:
- Զուրն ածա՛ չանախդ:
- Զգանս կառա՞ է:
- Քաշէ յինչուր օր յէրգննայ:

Վերջին խօսքի վրայ երկու կողմից սկսում են քաշել եւ լրաքանչեւր կողմին աշխատում է միւս կողմը դէպի իրեն քաշել: Ում ձեռքը, որ պոկւում է հանգսցից, նրա աչքերը կապում են եւ ծեծում, մինչեւ որ նա բռնում է մէկին եւ ազատուում:

Բացի յիշեալ խաղերից, մանուկներն ունեն նաեւ մի քանի երգեր: Այսպէս՝ աղջիկներն արեւածագին ասում են.

Յարէվ, յարէվ, դուս արի,
Հէրն ու մէրդ էկէլ էն.
Թուր ու թփանը բերէլ էն,
Գօմշի վօդը կօտրէլ էն.
Խմորը քացախէլ է,
Թունդիրը խշակէլ է,
Էրէին էլ լացէլ է:

Կամ՝

Լուսացաւ, լուսացաւ,
Լուսն ի բարին,
Սէղան տարան,
Սուրբ Նազարին.
Ղուրբան իմ ախզօր պազարին:

Չահարմահալի աղջիկը պարզ գոյներով
պատկերացնում է իր դրութիւնը.

Ես ախչիդ եմ,
Շատ զանազան եմ,
Կը նշանվեմ՝
Սուլթան ու խան եմ.
Կը պսակվեմ՝
Քու տրիժան եմ:

Մանչ ու աղջիկ մանուկները միմեանց
ասում են.

Գէտի ջուրը լամ տալէն,
Էրկու խնձօր ծապ տալէն.
Կարմիր կօվը մացու,
Կանանչ խառէն քիսացու.
Ես քու նանին հարոնացու,
Դու իմ նանին փէսացու:

Կամ՝

Արի էլթ անք մէյ քուչէն,
Տակդ գցենք խալիչէն,
Թաւափ տանք ծառի ալուչէն:

11. Հէքեաթներ:

Չահարմահալի ժողվը գորական գրականու-
թեան մէջ ուշագրաւ տեղ են բռնում նաեւ
Հէքեաթները, որոնք կազմուել են որոշ ժամա-

նակաշը աներում եւ իրենց հիւսւածքով լու-
դարձակ տեղ են գրաւում զեղջական արտա-
դրութիւնների մէջ: Բայց նախ քան նրանց մասին
խօսելը, ծանօթանանք հէքեաթների կազմուածքը
եւ տեսակների հետ:

Հէքեաթները մէծ մասամբ մտացածին
առասպելական հէրոսների, թագաւորների, իշ-
խանների, գիւցազների, աժդահաների, վիշապ-
ների, դեւերի, հուրի-փերիների եւ վերջապէս
կենդանիների եւ թռչունների շուրջ՝ ֆան-
տաստիկական պատկերներով հիւսւածքով
վըրդական զրոյցներ են, որոնց ստեղծած աշ-
խարհը իրական կեանքի հետ շատ քիչ յարաբե-
րութիւն ունի: Նրանք իրենց ծագումով ու
բովանդակութեամբ շատ հին են, որովհետեւ
նաև՝ առաջ են եկել դիցարանութիւնից եւ
երկրորդ՝ մեծամասնութեամբ պարունակում են
իրենց մէջ խորին հնութեան հետքեր եւ մի-
շեցնում մեզ նախնական ժամանակները, երբ
մարդիկ իրեւ թոյլ եւ խաւար արարածներ
չհասկանալով իրենց շրջապատի երեւոյթներն
ու պատահարները, դողում ու ակնածում էին եւ
նրանց գերբնական, աստուածային կերպարանք
տալիս: Այդ պատճառաւ էլ հէքեաթներն իրենց
բովանդակութեամբ բազմազան են: Յաձախ
մենք հանդիպում ենք դիցարանական հէքեաթնե-
ների, որոնք իրենց մէջ կրում են առասպելական
տարրեր, այսպէս են այն հէքեաթները, որոնց
մէջ գործող անձերը վիթխարի ու յաղթան-
դամ հսկաներ եւ դիցազներ են, որոնք պա-
տերազմում են ահուելի օձերի, վիշապների,
դեւերի, ոգիների եւ խաւարի դէմ, յաղթում
նրանց եւ հասնում երենց նպատակին. Կամ
գործող անձեր հանդիսանում են բնութեան
երեւոյթները, օր. ամպ, կայծակ, քամի, լուսին,
արիդակ եւ այլն: Կան մի շարք հէքեաթներ
եւս, ուր իրեւ գործող անձեր, հերոսներ դուրս
են գալիս կենդանիներն ու թռչունները եւ
մարդկանց նման խօսում են, գործում, որոնք
ունեն իրենց ինքնուրոյն հայեացքները, դատու-
ղութիւնները, սովորութիւնները, նիստ ու կացը,
նոյնիսկ իրենց ժողովները (օր. Մկների ժողովը),
թագաւորը, թագուհին, բանակը, զօրապետները
թիկնապահները եւայլ, ընդհանրապէս այսպիսի
հէքեաթների գլխաւոր հերոսները կազմում են
աղւէսը, գայլն ու արջը, աղւէսը՝ խորամանկ՝
Ճարպիկ, խարեբայ, չարասիրտ եւ անչաւա-
տարիմ, գայլը՝ ագահ, շատակեր, անբարեխիղ,
եւ տխմար, իսկ արջը՝ հզօր: Բացի սրանցից
հերոս-կենդանիներ են նաեւ առիւծը, շունը,

կատուն, մուկը, օձը. թռչուններից՝ աքաղաղը՝
արծիւը, կռունկը եւայլն։ Կենդանական հե-
քեաթների մէջ երեւան են գալիս նաև մոխրա-
կատար մկիկը, յաշքը փուք ընդան ճտիկը,
մոխրաթաւալ էշիկը։

կան այնպիսի հեքեաթներ էլ, ուր հերոս
ներն աչքի են լնկնում իրենց ազնուութեամբ,
գեղցկութեամբ եւ բարի գործերով. նրանք
պատժում են չարերին եւ իրենց նպատակն
իրագործելու համար դիմում են զանազան մի-
ջների, օր. թեւաւոր հրեղեն ձի են նստում
եւ իրենց հետ վերցնում անմահական խնձոր,
ջոր, կաթ կամ կախարդական հայելի, սանդր
եւ կամ հրեղեն սուր, նետ, կայծակի թուր եւ
այլն. Վերջապէս կան մի շարք ծաղրաշարծ եւ
կենցաղական հեքեաթներ վերցրած ժողովրդի
անցեալ եւ ներկայ ընտանեկան եւ ընկերական
առօրեայ կեանքից:

Պէտք է ասել, որ յիշեալ հէքեաթների
շատերի մէջ կան բազմաթիւ բարոյական-խրա-
տական տարրեր եւ նրանցից շատերը երեխաների
համար ընթերցանութեան ընտիր նիւթ են պա-
րունակում եւ կարող են նպաստել մանուկների
մատոր եւ բարոյական զարգացմանը, ուստի
նրանք եւ դաստիարակչական կարեւոր նշանա-
կութիւն ունեն, միայն անհրաժեշտ է լաւագյն-
ներն ընտրել եւ մշակել: Այդ ուղղութեամբ
արդէն բաւական մեծ աշխատանք կատարուած է
թէ եւ րոպական եւ թէ արեւելեան ազգերի
գրականութեան մէջ: Մեր ասածին ապացոյց
կարող են ծառայել այն բազմաթիւ հէքեաթ-
ները, որոնք հաւաքուելով՝ մշակուած եւ հրա-
տարակւած են առանձին գրքերով: Այսպէս՝
գերմանական գրականութեան մէջ յայտնի են
“Գրիմ եղբայրների հէքեաթները”, Ռուսների
մէջ՝ Ֆուկօվսկու եւ Պուշկինի մշակած հէքեաթ-
ները, Դանիացիների մէջ՝ “Ընդէրսնի հէքեաթ-
ները”, անգլիացիների մէջ՝ Կիպլինգի “Հտպի-
տին գիրքը”, իսկ մեր մէջ հէքեաթներ հաւա-
քել եւ մշակել են հետեւեալ բանահաւաք-
ները. — Գարեգին եպիսկ. Սրուանձտեանցը
հաւաքել է Ալանեցւոց հէքեաթները, Գէորգ
Շերենցը՝ Մշեցւոց, Տիգրան Կաւասսարդեանը՝
Խրեանցւոց, Տէր-Ալէքսանդրեանը՝ Թիֆլիզեց-
ւոց, և Սարգսեանը՝ Ագուլցւոց, Ալլահվերդեանը՝
Զէյթունցւոց եւ այլն: Յայտնի են նաև «Ազ-
գագրական հանդէս», ի մէջ լոյս տեսած հէ-
քեաթներու:

Ըստ Հանրապետության հեքեղաթ պատովածության
Աւոր պայմաններն ու պառաւ մամիկներն

են (թէեւ կան յատուկ չէքեաթարաններ, որնք պատմելու առանձին շնորհք ունեն), որնք սկսում են “Անում է, չի լինում”, կամ “Կար, չկար, եւ կամ “Եղել է, չէ եղել” նախաբանով, իսկ վերջացնում են “Աստծուց յիրեք ինծոր ընդաւ. մէկն ասողին, մէկը լսողին, մէկն էլ յանդաշ գողին, բնորոշ խօսքերով:

Հայաբնահալում եւս, ինչպէս ասեցինք,
կան մի շաբթ հեքեաթներ, որոնք ըջում են
գիւղացիների բերանում եւ աւանդում սերն-
դից սերունդ. դրանք մեծ ամասնութեամբ դրացի
պարսիկներից փոխ առնուած եւ առասպելական
բնոյթով հիւսուած հեքեաթներ են, որոնք մին-
սեւ այսօր էլ մեծ հաճցյով են պատմում եւ
լսում գիւղացիների մէջ։ Նրանց ժամադիր ևնք
հաւաքելու յարմար պատեհութեամբ։

Տեղական հեքեաթներից մենք գրի առինք
ըստամենը երեք հատ. — Օխտը մուկը, Պա-
ռաւն ու էջը եւ բուռուկես, որոնք իրենց կազ-
մուածքով եւ բովանդակութեամբ աւելի ինք-
նուրոյն են, աւելի հարազատ եւ ցոյց են տալիս
շարահարութեան ճարտար հիւսուածք: Տեսնենք
իւրաքանչեւրն առանձին, առանձին:

U.

ՕՒՏԵ ՄՈՒԿԱԼ

Օխտը մուկ ին էլի, ալուր ին կիստի ու ֆառ ին
քցի. Ընդէլ էր պատի միլին: Ին էլ էրթում է, օր
խմօր անի՛ Ընդհում է խմօրի մեջն ու սատկում է:
Վեցց մուկն օր տէ հում են ֆիքը են անում, Փիքը
են անում, մօխրակատար են ըլնում: Մէ գանա
ձնջուղ գալիս է, նստում է բաշին ու էդ մկանուն
ասում է.

— Առևկ ախպրտանք, չմարելը սօխրակա-
ռակելի:

Արևի առաջնորդ մէջն ասում է.

Онъ мабѣлъ, онъ мабѣлъ,

Վօկրակատար Ալիկն ասեմ :

Բա չես գիտը,
Մկան ու պստիկը սատկել է:

Ճաճկը փիքը է անում, փիքը է անում,
Ճաճկը փուք է ընդնում, երթում է նստում և մէ
Ճաճկը չարցնում է.

1 Յիշեալ հերթակները հաւաքելիս՝ աշակելու և մրց
բնիկ 2արդարացալից պր. Մանասէր Տէր-Արգասեանը. որին
այսուհետեւ անկեղծ զգացմունքների հաւաստիքը:

8*

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկիկն ասեմ,
Յաճկը փուք ընդան ճշտիկն ասեմ,
Բա չես գիտի,
Մկան ու պատիկը սատկէլ է:

Ծառը ֆիքր է անում, ֆիքր է անում,
տէրեւը վեր է տալիս: Մէ էծ գալիս է ծառի տակը
յարձէլու, տէհում է ծառը տէրեւը յիստագ վեր
է տվի, հարցնում է ծառիցը.

— Այ ծառ, տէրեւդ յուր ես վեր տվի,
Ծառն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկիկն ասեմ,
Յաճկը փուք ընդան ճշտիկն ասեմ,
Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ,
Բա չես գիտի,
Մկան ու պատիկը սատկէլ է:

Էծը ֆիքր է անում, ֆիքր է անում, պողը
կօտրում է: Էնդստէն էրթում է գէդը, օր ջուր
խմի, գէդը տէհում է իծու պողը կօտրուէլ է,
հարցնում է.

— Այ էծ, պողդ յուր է կօտրվի:
Էծն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկիկն ասեմ,
Յաճկը փուք ընդան ճշտիկն ասեմ,
Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ,
Պող կօտրվան իծիկն ասեմ,
Բա չես գիտի,
Մկան ու պատիկը սատկէլ է:

Գէդը ֆիքր է անում, ֆիքր է անում, յա-
րուն է քանդում: Մէ ախչետ գալիս է գէդիցը
ջուր լցնի, տէհում է գէդն յարուն է քանդի,
հարցնում է.

— Այ գէդ, յուր ես յարուն քանդի:
Գէդն ասում է:

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկիկն ասեմ,
Յաճկը փուք ընդան ճշտիկն ասեմ,
Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ,
Պող կօտրվան իծիկն ասեմ,
Յարուն քանդան գէդիկն ասեմ,
Բա չես գիտի,
Մկան ու պատիկը սատկէլ է:

Ախչեգը ֆիքր է անուն, ֆիքր է անում,
կուժը կազում է հուսիցը ու տուն է գալիս: Պա-
ռաւ նանն օր ջահրա մանելիս է ընում, հար-
ցընում է.

— Այ ախչետ, կուժդ յուր է կպի հուսիցդ:

Ախչեգն ասում է.
Որն ասեմ, որն ասեմ,

Մօխրակատար մկիկն ասեմ,
Յաճկը փուք ընդան ճշտիկն ասեմ,
Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ,
Պող կօտրվան իծիկն ասեմ,
Յարուն քանդան գէդիկն ասեմ,
կուժ հուս կպան ախչեգն ասեմ,
Բա չես գիտի,
Մկան ու պատիկը սատկէլ է:

Պառաւը ֆիքր է անում, ֆիքր է անում:
մանիջը կազում է ձէսիցը: Էս պառաւը էրթում է
ժամ: Ժամիօրը տէհում է ու հարցնում է.

— Այ պառաւ, մանիջդ յուր է կպի ձէոիցդ:
Պառաւն ասում է.

Որն ասեմ, որն ասեմ,
Մօխրակատար մկիկն ասեմ,
Յաճկը փուք ընդան ճշտիկն ասեմ,
Տէրեւ վեր տվան ծառիկն ասեմ,
Պող կօտրվան իծիկն ասեմ,
Յարուն քանդան գէդիկն ասեմ,
կուժ հուս կպան ախչեգն ասեմ,
Մանիջ կպան ձէսիկն ասեմ,
Բա չէք գիտի,
Մկան ու պատիկը սատկէլ է:

Ժամիօրը ֆիքր է անում, ֆիքր է անում:
յիրար է կազում:
Ասածուց յիրեք խնձօր վեր ընդառ, մէգ
ասողին, մէգը լսողին, մէգն ել յանդաջ դնողին:

Բ.

ՊԵՌԵԿԻՆ ՈՒ Է Ֆ Բ Ը

Մէ պառաւ է ընում, մէ էծ է ունենայի:
Մէդ օր պառաւն էտ էծը կթում է ու կաթի
դնում է սալդի տակը ու ինքը էրթում է ժամ-
ինչուր ետ է գալիս, մէ աղվէս է գալիս ու էտ
կաթն ուտում է: Պառաւը ջդրվում է ու կպշու-
մէ աղվէս պոչիցն ու ասում է.

— Եղվէս ախպէր, կաթս տուր:
Աղվէսը էրթում է իծու մօտ ու ասում է:
Էծ ախպէր, ինձի մէ քիչ կաթ տուր,
կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վել անի,
Էրթամ չարուխմարուխ կոծէլու:
Էծն ասում է.

— Հալա մէ քիչ տէրեւ տուր, ուտեմ:
Աղվէսն էրթում է ծառի մօտ ու ասում է:
Այ ծառ, ինձի մէ քիչ տէրեւ տուր,
Տէրեւը տանեմ տամ իծուն,
Էծն ինձի կաթ տուր,
կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վել անի,
Էրթամ չարուխմարուխ կոծէլու:

Ծառան ասում է.

— Հալա մէ քիչ ջուր տուր, և մեմ:
Աղվէսն էրթում է ախպրի մօտն ու ասում է.

Այ ախպուր, ինձի մէ քիչ ջուր տուր,
ջուրը տանեմ տամ ծառին,
Ծառն ինձի տէրեւ տայ,
Տէրեւը տանեմ տամ իծուն,
իծն ինձի կաթ տայ,
կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ մարուխ կռծէլու:

Ախպուրն ասում է.

— Հալա ախչդնէրուն ասա՛, գա՞ն դօվը
խաղան:

Աղվէսն էրթում է ախչդնէրու քով ու ա-
սում է.

Այ ախչդնէր, արիք ախպրի դօվը խաղեք,
Ախպուրն ինձի ջուր տայ,
Ջուրը տանեմ տամ ծառին,
Ծառն ինձի տէրեւ տայ,
Տէրեւը տանեմ տամ իծուն,
իծն ինձի կաթ տայ,
կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ մարուխ կռծէլու:

Ախչդնէրն ասում են.

— Հալա օսկէրիջին ասա՛, մէզի մատնի տայ,
Աղվէսն էրթում է օսկէրիջի մօտն ու ասում է.

Այ օսկէրիջ, ինձի մէ դանա մատնի տուր,
Մատնին տանեմ տամ ախչդնէրուն,
Ախչդնէրն էրթան ախպրի դօվը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տայ,
Ջուրը տանեմ տամ ծառին,
Ծառն ինձի տէրեւ տայ,
Տէրեւը տանեմ տամ իծուն,
իծն ինձի կաթ տայ,
կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ մարուխ կռծէլու:

Օսկէրիջն ասում է.

— Հալա ինձի մէ ձու տուր,
Աղվէսն էրթում է հաւի մօտն ու ասում է.

Այ հաւ, ինձի մէ ձու տուր,
Ջուն տանեմ տամ օսկէրիջին,
Օսկէրիջն ինձի մատնի տայ,
Մատնին տանեմ տամ ախչդնէրուն,
Ախչդնէրն էրթան ախպրի դօվը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տայ,
Ջուրը տանեմ տամ ծառին,
Ծառն ինձի տէրեւ տայ,
Տէրեւը տանեմ տամ իծուն,

իծն ինձի կաթ տայ,
կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ մարուխ կռծէլու:

Հաւն ասում է.

— Հալա կուտ տուր օր ուտեմ:
Աղվէսն էրթում է գմբի մօտն ու ասում է.

Այ գումբ, ինձի կուտ տուր,
Կուտը տանեմ տամ հաւին,
Հաւն ինձի մէ ձու տայ,
Չուն տանեմ տամ օսկէրիջին,
Օսկէրիջն ինձի մատնի տայ,
Մատնին տանեմ տամ ախչդնէրուն,
Ախչդնէրն էրթան ախպրի դօվը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տայ,
Ջուրը տանեմ տամ ծառին,
Ծառն ինձի տէրեւ տայ,
Տէրեւը տանեմ տամ իծուն,
իծն ինձի կաթ տայ,
կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ մարուխ կռծէլու:

Գումբն ասում է.

— Հալա ինձի մէ քիչ կու տուր:
Աղվէսն էրթում է գմբի մօտն ու ասում է.

Այ գումբ, ինձի մէ քիչ կու տուր,
Կուն տանեմ տամ դմբին,
Դումբին ինձի կուտ տայ,
Կուտը տանեմ տամ հաւին,
Հաւն ինձի ձու տայ,
Չուն տանեմ տամ օսկէրիջին,
Օսկէրիջն ինձի մատնի տայ,
Մատնին տանեմ տամ ախչդնէրուն,
Ախչդնէրն էրթան ախպրի դօվը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տայ,
Ջուրը տանեմ տամ ծառին,
Ծառն ինձի տէրեւ տայ,
Տէրեւը տանեմ տամ իծուն,
իծն ինձի կաթ տայ,
կաթը տանեմ տամ պառվին,
Պառաւը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ մարուխ կռծէլու:

Գումբն ասում է.

— Հալա ինձի զամբը տուր ուտեմ:
Աղվէսն էրթում է շամբը, մէ փօշտա զամբը
է բաղում ու բերում է տալիս է գոմչին, յենչաղը

գոմչը կու է տալիս,
Կուն տալիս է գմբին,
Դումբը կուտ է տալիս,
Կուտը տալիս է հաւին,
Հաւը ձու է տալիս,
Չուն տալիս է օսկէրիջին,
Օսկէրիջը մատնի է տալիս,

Մատնին տալիս է ախշգներուն,
Ախշները էրթում են ախպրի դօլը խաղիս են,
Ախպուրը ջուր է տալիս,
Ջուրը տալիս է ծառին,
Ծառը տէրեւ է տալիս,
Տէրեւ տալիս է իծուն,
Էծը կաթ է տալիս,
Կաթը տալիս է պառվին,
Պառաւը պոչը վել է անում,
Էրթում է չարուի-մարսւի կոծելու:

Ասոնուց յիրեք խնձօր վեր ընդաւ. մէզն
ասողին, մէզը լսողին, մէզն էլ յանդաջ դնողին:

Գ.

ԲՈՒԹՈՒԿԵՍ

Մէ մարթ է ըլնում, մէ կնիդ է ունենում:
Մէդ օր կնիգը մարթուն ասում է.

— Այ մարթ, գնա քաղաք, մէ հալիմ դրեք
առ, բի:

Մարթն ասում է. հալա մէ թէքայ հաց
տուր. կնիգն ասում է.

— Լաւ է, գնա, հիմի եդ դուքսու:

Մարթու ճարը կտրվում է, էրթում է քա-
ղաք, հալիմդրիք առնում է ու բերում է տուն:
Կնիգն ասում է.

— Այ մարթ, որչանք ձավար կըտանի:

Մարթն ասում է.

— Զեմ դիտի:

Կնիգը յուշունց է տալիս մարթուն եւ յեդ է
զրկում տիրոջն մօտ, օր յիմանայ, տէսնի որչանք
ձավար կը տանի: Մարթը յեդ է էրթում ու հարց-
նում է կծուճ ծախօղին: կծուճ ծախօղն ասում է.

— Բուռուկէս:

Մարթը ճամփին «Բուռուկէս, բուռուկէս»
ասելէն գալիս է, օր մտէն չընինի: Ճամփին դու-
շար է ըլնում մէ մարթու, օր ցանք է անում: Ցանք-
վորը հենց յիմանում է, օր էտ իրա ցանքի հմար
է ասում, բնա է անում էտուր ծէծէլը, թէ յուր
ես ասում բուռուկէս:

Մարթն ասում է.

— Բա ինչ ասեմ:

Ցանքվորն ասում է.

— Ասա. մէզը հըզար անի:

— Մարթը «մէզը հըզար անի, մէզը հըզար
անի» ասելէն գալիս է, համում է մէ քանի հօքու,
օր մէ մեռ են տանում թաղէլու:

Էտ մարթիքը հենց յիմանում են, օր էտ
իրանց մեռի հմար է ասում մէզը հըզար անի, բնա
են անում էտուր ծէծէլը, թէ յուր ես ասում մէզը
հըզար անի:

Մարթն ասում է.

— Բա ինչ ասեմ:

Մարթիկն ասում են.

— Ասա. էս մէզն ըլնի, էլ չըլնի:

Մարթը «էս մէզն ըլնի, էլ չըլնի, էս մէզն
ըլնի, էլ չըլնի» ասելէն գալիս է, հասնում է մէ-
հաշնքի: Հաշնքի մակարները հենց յիմանում են:
օր իրանց հաշնքի հմար է ասում՝ բնա են անու-
մ ծէծէլը ու ասում են.

— Ասա. յամիշա եդ ձեր բանն ըլնի:

Մարթը «յամիշա եդ ձեր բանն ըլնի, յա-
միշա եդ ձեր բանն ըլնի» ասելէն գալիս է, հա-
սնում է մի քանի հօքու, օր ախա են դուս քցում:
Մարթիքը հենց յիմանում են, օր իրանց ախա դու-
մքելու հմար է ասում՝ բնա են անում էդ խեղլ
մարթուն ծէծէլը, թէ գու յուր ես ասում յամիշ
էդ ձեր բանն ըլնի:

Մարթն ասում է.

— Բա ինչ ասեմ:

Մարթիքն ասում են.

— Էլ օնչինչ մի ասի, կուսէ կուս գնա:

Մարթը կուսէ կուս գալիս է, հասնում է
դաքավօրի ջօրիքուն, օր չինի են բառցած տանում:
Ջօրիքը տէհում են թէ չէ՝ խռանում են ու բէր-
նէր տալիս գէղին ու ջարթու փշուր են անում:
Դաքավօրի մարթիքը բանում են էտ մարթուն ու
տանում են, զընդընում: Զընդընի մէջ էտ մարթը
բնա է անում իրան, իրան խօսալը.

Ասի. բուռուկէս, ծէծէցին,

Ասի. մէզը հըզար անի, ծէծէցին,

Ասի. էս մէզն ըլնի, էլ չըլնի, ծէծէցին,

Ասի. յամիշա եդ ձեր բանն ըլնի, ծէծէցին
կուսէ կուս էկայ, ծէծէցին:

Եեփօր դաքավօրի մարթիքը էս բանը լսում
են, էրթում են դաքավօրին թարիփ են անում:
Դաքավօրը հրամայում է, օր էդ գիգ մարթուն
դէն անեն: Դաքավօրի մարթիքը դէն են անում
էտուր ասելով.

— Կուսէ կուս մի էրթայ, գլուխդ շախէ պա-
հէ ու դնա:

Մարթը դունչը ցցած գալիս է, հասնում է
իրանց տան շէմքին. հենց իտէնց ուզում է նի-
էրթայ տուն, գլուխդ գիր է անում բալավարին:
Ճվում է կնդան ու ասում է.

— Այ կնիգ, զազմէն տէհում, իղա բալա-
վարը քանդեմ, նի գամ,

Կնիգն ասում է.

— Դէ կուս կէցի ու նի արի,
Մարթն ասում է.

— Զինի, դաքավօրը զադաղան է արի:
Կնիգը զազմէն տալիս է մարթուն. մարթը
ես ասում բալավարը քանդում է, օր նի գա, տէ-
հում է վախիլ մէ բու է դուս գալիս ու նստում է
կնդայ ճակաբին. մարթը զազմօվ տալի է բուին, օր
սատկի, կպչում է կնդայ ճակաբին ու բուի տեղ:
կնիգն է մեռնում:

Աստծուց յիրեք խնձօր վեր ընդաւ. մէզն
ասողին, մէզը լսողին, մէզն էլ յանդաջ դնողին:
(Ըստ բանականին)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԼԻՆ